ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Նոյեմբերյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը /այսուհետ՝ ՍԱՏԳ/ սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով Նոյեմբերյանի տարածաշրջանում Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Կողմեր) հրավիրվում են հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ /այսուհետ՝ Խորհուրդ/:

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները /հայտերը/ կարող են ներկայացնել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Նոյեմբերյանի ՍԱՏԳ՝ մինչև 2016թ. մայիսի 17-ը /հասցեն՝ ք.Նոյեմբերյան Զ.Անդրանիկի 3 հեռ. –

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

ա) սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը,

բ) սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացումը: Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության Համաձայնագրում, որը տրամադրվում է Սոցիալական համագործակցության Համաձայնագրին միացած Կողմերին:

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի
Նոյեմբերյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն